

## Ինչպե՞ս մասշտաբավորել քարտեզը:

Քարտեզի մասշտաբավորման համար նախատեսված են հետևյալ գործիքները՝



– zoom in՝ քարտեզի ընտրած մասի մեծացում



– zoom out՝ քարտեզի ընտրած մասի փոքրացում



– zoom in՝ քարտեզի ընտրած մասի մեծացում օգտվողի կողմից նշված չափով



– zoom out՝ քարտեզի ընտրած մասի փոքրացում օգտվողի կողմից նշված չափով




### ԳՈՐԾԻՔ

Օգտագործելով Ձեր համակարգչի մկնիկը՝ սեղմած պահելով մկնիկի ձախ ստեղծը՝ գծեք ուղղանկյունի քարտեզի այն մասում, որտեղ ցանկանում եք մեծացնել: Եթե ուղղանկյունը գծվել է ոչ այնքան համապատասխան Ձեր ցանկացած մասին, կարող եք այն մկնիկի օգնությամբ տեղափոխել անհրաժեշտ տեղամաս:



Սեղմեք կոճակը: Քարտեզը կբեռնավորվի, և ընտրված հատվածը, արդեն մեծացված, կհայտնվի էկրանին: Օրինակ, աշխարհի քարտեզից մասշտաբավորենք Մադագասկար կղզին:





Կարող եք շարունակել մասշտաբավորումը՝ ստանալով քարտեզի ավելի մանրամասն հատվածներ:



ԳՈՐԾԻՔ



zoom out գործիքը կատարում է գործիքի հակառակ գործողությունը, այսինքն՝ փոքրացնելով քարտեզի մասշտաբը՝ ստանալ ավելի լայն աշխարհագրական տարածք: Անհրաժեշտ է քարտեզի վրա գծել ուղղանկյուն և սեղմել կոճակին:








ԳՈՐԾԻՔ

Գործիքը մեծացնում է քարտեզը՝ օգտվողի կողմից հայտարարած չափով: Գործիքի մոտ գտնվող տեքստային դաշտում մուտքագրեք ձեր ցանկացած մեծությունը: (Համակարգը ավտոմատ ցույց է տալիս “4” թիվը ): Այսինքն, եթե ցանկանում եք 10 անգամ մեծացնել քարտեզը, անհրաժեշտ է ջնջել 4 թիվը և դրա փոխարեն մուտքագրել “10”: Թիվը մուտքագրելուց հետո անհրաժեշտ է ակտիվացնել կոճակը և մկնիկով պարզապես սեղմել քարտեզի այն մասում, որն անհրաժեշտ է մեծացնել: Քարտեզի տվյալ մասը մեծանում և միաժամանակ տեղափոխվում է Էկրանի կենտրոն:

Այլ գործիքի անցնելուց առաջ անհրաժեշտ է մկնիկի սեղմումով անջատել գործիքը:

 ԳՈՐԾԻՔ

 գործիքը կատարում է  գործիքի հակառակ գործողությունը, այսինքն՝ հեռացնում է քարտեզը օգտվողի կողմից նշած չափով: Այն աշխատում է  գործիքի նմանությամբ: Տեքստային դաշտում մուտքագրեք, թե քանի անգամ եք ցանկանում հեռացնել քարտեզը (ստանալ ավելի մեծ աշխարհագրական տարածք), մկնիկի սեղմումով ակտիվացրեք  գործիքը և սեղմեք քարտեզի անհրաժեշտ մասին:

Այլ գործիքի անցնելուց առաջ անհրաժեշտ է մկնիկի սեղմումով անջատել  գործիքը: